ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ШИРАКСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ ИМЕНИ М. НАЛБАНДЯНА
M. NALBANDYAN STATE UNIVERSITY OF SHIRAK
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ SCIENTIFIC PROCEEDINGS

Պրակ Բ
Выпуск Б
Issue B

2022

№ 2

ՀՏԴ 398
DOI 10.54151/27382559-22.2pb-65

ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՇԻՐԱԿԻ՝ ՄԱՔՈՒՐ ՋՐԻ ԵՎ ԳԱԶԱՎՈՐՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ. ԴԱՇՏԱՅԻՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարտիկյան Ա. Վ.

Աշխատանքն ընդգրկում է Շիրակի մարզի Աշոցք, Ամասիա և Անի խոշորացված համայնքների տարածքներում կատարված դաշտային ուսումնասիրություններ՝ առավել հայտնի աղբյուրների մասին: Հավաքել և ձեր ուշադրությանն ենք ներկայացնում «հրաշագործ» աղբյուրների մասին վկայություններ ու հավատալիքներ, որոնք բնիկները պահպանել են սերնդեսերունդ: Ուսումնասիրված աղբյուրներից շատերը ուխտավայրեր են:

Բանալի բառեր. աղբյուր, ջուր, Շիրակ, Աշոցք, Ամասիա, Անի, Լուսաղբյուր, ժամի աղբյուր, Թթու ջուր:

Որդի պարգևող, երազանքներ իրականացնող, հիվանդություններ բուժող, տարագիրներին վերադարձնող, նախազգուշացնող, խռովող ու նույնիսկ վատ գործ անելիս, ժողովրդական լեզվով ասած, «փորձանքի բերող» աղբյուրների մասին դարեր շարունակ ժողովուրդը առասպելներ է հյուսել՝ փոխանցելով այն սերունդներին: Այդ հավատալիքները դարձել են կենցաղավարման բաղադրիչ: Անհիշելի՝ նախաքրիստոնեական և նույնիսկ նախահեթանոսական ժամանակներից մինչև մեր օրերը, երբ գիտության ու տեխնիկայի առաջընթացն իր պատմական բարձրակետին է, միևնույնն է, «հրաշքներ գործող» աղբյուրների հանդեպ հավատքը փոքր-ինչ ձևափոխվել, բայց և պահպանվել է մեր երկրի գյուղական բնակավայրերում:

Հայկական լեռնաշխարհում ջրի՝ «Աստվածային» ճանաչման մասին է հիշատակում Ղևոնդ Ալիշանն իր «Հին հավատք հայոց» գրքում [1]:

Պատմական Հայաստանի գրեթե ողջ տարածքում, որտեղից եկել են մեր ուսումնասիրման տարածքի՝ Շիրակի բնակիչների նախնիները,

հաճախ է հիշատակվում սրբազան աղբյուրների մասին, որոնց մոտ կառուցված էին տաճար, եկեղեցի, մատուռ կամ դրված էին խաչքարեր:

Մեր երկրի հյուսիսից հարավ բազմաթիվ սառնորակ ակունքներ են բխում (ինչպես և Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքում, որն այժմյան Թուրքիա և Ադրբեջան պետությունների տարածքում է գտնվում):[1]

Բանահավաքչական աշխատանքների արդյունքում առանձնացրել ենք այն աղբյուրները, որոնց մասին առավել շատ են վկայությունները, թե ինչ հիվանդություններ են բուժել, ինչպես են անպտուղ կանանց պտղաբեր դարձրել ու ինչ նպատակներ են իրականացրել:

Ջուրը մեծ դեր է ունեցել հայ ժողովրդի բանահյուսական կենցաղում: Որոշ ավանդույթներ պահպանվում են մինչ օրս, որոշ ավանդույթներ էլ կենցաղային պայմանների փոփոխության հետ մեկտեղ ձևափոխման են ենթարկվել, սակայն ջրի հանդեպ պաշտամունքային մոտեցումն առկա է թե՛ կրոնական, թե՛ կենցաղավարման ծեսերում: Հին հայերի մոտ ջրի պաշտամունքի, ջրի, ծովի ու անձրևի աստվածուհի Ծովինարի, «լուսաղբյուրի» ու «կաթնաղբյուրի», ակունքների մասին, ջրի ակունքների մոտ կանգնեցրած վիշապ քարակոթողների մասին հիշատակումներն հզորացնում են պատկերացումներն այն մասին, թե ջրին ինչպիսի մոգական հատկանիշներ են վերագրել հնում: [2], [3], [4], [6]

Հայկական լեռնաշխարհում ջրի պաշտամունքին ու «բուժիչ» ակունքներին է անդրադարձել Երվանդ Լալայանը [4], [9]:

Հայոց առասպելազրույցում հիշատակվում է «Որդի պարգևող» Կաթնաղբյուրի մասին: Արուսյակ Սահակյանը «Սասնա ծռերի» պատումների քննական համեմատություն գրքում հիշատակում է նաև «բուռ ու կես ջրից» ծնված դյուցազունների դեպի Տարոն վերադարձի

[1]Արևմտյան Հայաստանի Դերսիմ քաղաքով է հոսում Մնձուր գետը: Այստեղ են գտնվում Անահիտի սրբազան աղբյուրները: Ավանդույթի համաձայն՝ Անահիտի 40 ծիծերից աղբյուր է սկիզբ առնում, և այդ աղբյուրները միավորվելով՝ լճակ, ապա գետ են դառնում: Այս ջրերը սրբազան են համարվում և ալևիները (բնակավայրի ներկայիս բնակիչները) Անահիտի աղբյուրների ակունքներում մոմ են վառում ու ծեսեր կատարում: 2014-ին և 2022-ին, ամռան ամիսներին, մեր այցելությունների ժամանակ նույնպես նկատեցինք, թե ինչպես էին ոտաբոբիկ մոտենում ակունքներին ու խոսքեր շշնջալով՝ վառում իրենց հետ վերցրած մոմերը: Իսկ հայ ուխտավորները նախ լողանում էին ավազանում, ապա Հայաստանում իրենց սպասող հիվանդների համար տարաներով ջուր էին վերցնում ակունքներից:

մասին[2] [5]: Հայկական լեռնաշխարում ջրի պաշտամունքի տարբեր դրսևորումներն է ուսումնասիրել Գոհար Վարդումյանը [10]: Հայոց հավատալիքներում և կենցաղավարման ծեսերում ջրի դերին են անդրադարձել Վաչագան Ավագյանը, Հրանուշ Խառատյանը, Ռոման Հովսեփյանը[3] [11], [8], [13]: Շիրակի վարդավառյան ուխտավայրերին է անդրադարձել, ինչպես և վարդավառյան ուխտավայրերի տիպաբանության փորձ կատարել, Հասմիկ Աբրահամյանը [12], [13]:

Ղևոնդ Ալիշանը պատմում է նաև ջրին արական սկիզբ վերագրելու ու պաշտելու մասին. «Վառեին զԿրակն՝ Քոյրն, և զԱղբյուրն՝ եղբայր», ինչի արտացոլումը տեսնում ենք նաև մերօրյա կենցաղավարման ծեսերում [13]: Շիրակի մարզի Աշոցքի տարածաշրջանի աղբյուրներից շատերի ջուրը բնութագրելիս հաճախ անվանում են «որձ» ջուր (որևէ այլ բացատրություն չեն ավելացնում՝ ասելով, որ պապերից են լսել)։ Նման բնորոշում տալիս են նաև Անիի Սառնաղբյուր գյուղի «Զաղա» կոչվող քարանձավի ջրին։

Աշոցք. ***Տոհմական աղբյուրներ***: Աշոցքի սարահարթը հարուստ է սառնորակ ակունքներով, որոնցից շատերի շուրջ ավանդազրույցներ են հյուսվել։ Հաճախակի կարելի է հանդիպել «լուսաղբյուրների» և «սրբի աղբյուրների», որոնք տեղաբնակների կարծիքով հրաշքներ են գործում։

Որպես Աշոցք գյուղի հիմնադրման տարեթիվ՝ նշվում է 1829 թվականը։ Բնակիչների նախնիներն հիմնականում եկել են Արևմտյան Հայաստանի Մուշ և Ալաշկերտ գավառներից։

Բնակավայրը հիմնադրելիս տեղաբնակների պապերն իրենց տները կառուցել են տարածքում բխող սառնորակ ակունքների մոտ, որտեղ մինչ օրս էլ բնակվում են գյուղի հիմնադիրների սերունդները, իսկ աղբյուրները կոչում են տոհմերի անուններով։ Աշոցքում հայտնի են Ակոյենց աղբյուրը, Ադաշենց աղբյուրը, Կիրեղենց աղբյուրն ու բոլոր այն գերդաստանների աղբյուրները, որոնք համարվում են գյուղի հիմնադիրները։ Հիշատակում է տոհմական 7 աղբյուր [15]:

Տարեցներից մեկը հիշում է նաև, թե ինչպես էր հայրը աղբյուրի ակունքի հետ զրուցում, սակայն չի հիշում, թե ինչ էր զրուցում, կամ միգուցե աղոթք էր անում։

---

[2] Մեր ուսումնասիրած աղբյուրներից մեկին բանախոսները վերագրում էին տարագիր որդիներին վերադարձնող հատկություն։

[3] Մեր ուսումնասիրած գյուղերում տարեց կանանց բնութագրած անձրևաբեր՝ Նուրի-նուրիի ծեսերի բնութագիրը նմանություն ունի Հայաստանում ապրող եզդիների անձրևաբեր և անձրևախափան ծեսերի կատարման ավանդույթների հետ, ինչն ուսումնասիրել է Ռ. Հովսեփյանը։

«Ժամի աղբյուր»: Աշոցքում 19-րդ դարի ս. Գևորգ եկեղեցին (Աշոցքի բնակիչները հաճախ «Լույս գերեզման» են անվանում) կառուցված է աղբյուրի ակունքին, ինչին բնակիչները «Ժամի աղբյուր» են անվանում: Գյուղում ամենաշատ ավանդազրույցներն ու հավատալիքները կապված են «Ժամի աղբյուրի», դրա զորության ու այդ ջրում լողացող խաչով ձկների հետ: 70-87-ամյա կանայք պատմում են, որ մանուկ հասակում ամեն տարի հունվարի 6-ին՝ Սուրբ Ծննդյան տոնին, տատերն իրենց ուղարկում էին «Ժամի աղբյուրից» մեկ դույլ ջուր բերելու, որպեսզի գալիք տարում հաջողությունն ու «ղսմաթը» ջրի հետ ու օգնությամբ մտնի իրենց օջախ: Կարևոր պայման է եղել, որ ջուրը պետք է բերեին լռելյայն, ճանապարհին առանց որևէ բառ խոսելու, որ հաջողությունը չխռովեր [16]:

Աշոցքի «Ժամի աղբյուրի» ավանդազրույցներից շատերը կապված են այդ աղբյուրի ջրերում լողացող ձկների հետ, որոնց գլխին տեսանելի խաչ է ուրվագծվել (այդ ձկները հիմա վերացել են վերոնշյալ ավազանում): Բնակիչները «խաչով ձկներ» էին անվանում ու հավատում, որ, եթե կերակրեին այդ ձկներին և ասեին իրենց ցանկությունները, անպայման կկատարվեին: Միջինից բարձր տարիքի տղամարդկանց խոսքերով՝ պատանեկության տարիներին, երբ ֆուտբոլ էին խաղում, թիմակից ընկերներով նախ գալիս, կերակրում էին «Ժամի խաչով ձկներին», ապա գնում խաղին մասնակցելու և անպայման հաղթանակ էին տանում [17]:

«Ժամի խաչով ձկներին» նաև մոգական զորություն են վերագրել և խուսափել են այդ ձկներն ուտելուց: Գյուղում պատմում են (այդ պատմությունը գրեթե բոլորն են պատմում, առանց ձևափոխումների), որ շինարարներ են եղել, հայր ու որդի, ծաղրել են բնակիչների սնահավատությունը, այդ ձկներից տարել, կերել են ու մահացել: Բանախոսները հավատում են, որ «Ժամի աղբյուրն» է պատժել: [18]

Մեծ Սեպասարի «Ժամի աղբյուր»: Եկեղեցուն կից ևս մեկ աղբյուրի և դրան վերագրվող հավատալիքների մասին են պատմում նաև Աշոցքի Մեծ Սեպասար գյուղում: Այն շատ հարմար է ձկներ բուծելու համար, սակայն թե՛ բնակիչները և թե՛ այլ բնակավայրերից եկող գործարարները խուսափում են այդտեղ ձկնաբուծություն զարգացնել: Հավատալիք կա, որ Մեծ Սեպասարի «Ժամի աղբյուրը» կպատժի: Գյուղի ս. Ամենափրկիչ եկեղեցուց մոտ 200 մետր դեպի հարավ ընդերքից բխող աղբյուր կար, որտեղից կանայք ու աղջիկները դույլերով ու խանթարներով (դույլերը ուսին դնելու փայտե ձող) ջուր են կրել, տղաներն էլ այդ ակունքի մոտ

հարսնատես են եկել [14]: Մեծ Սեպասարի 40-76-ամյա բնակիչները պատմում են, որ 70-ականներին իրենց նախկին համագյուղացիները եկել, այդ աղբյուրը քանդել ու լճակ են ստեղծել, որ ձկնաբուծություն զարգացնեն: Նրանց վաղաժամ մահը համագյուղացիները կապում են «ժամի աղբյուրի» ակունքը քանդելու հետ: Չնայած այդ լճակը կարծես պատրաստի ձկնաբուծարան է, սակայն ոչ ոք չի համարձակվում այդտեղ ձուկ բուծել, վախենում են «Ժամի աղբյուրը» պատժի [18]:

Հարթաշենի «Սուրբ Լուսաղբյուր» կամ «Լուսաղբյուրներ»: Այդ ակունքների վերևում հարակից գյուղերի բնակիչները հաճախ լույս են տեսնում:

«Սուրբ Լուսաղբյուրը» կամ «սուրբ Լուսաղբյուրները» (տեղաբնակները 2 տարբերակն էլ կիրառում են) գտնվում է Հարթաշեն գյուղից 1.2 կմ արևելք:

Հսկայական ժայռաքարերի բյուր ակունքներից բխող «Լուսաղբյուրների» ջրերը, տեղաբնակների պատմելով, հիվանդություններ են բուժում, վիշտ ամոքում, վերադարձնում տարագիրներին, նպատակներ իրականացնում, երեխաներ պարգևում: 2020 թվականին սանձազերծված 44-օրյա պատերազմի ընթացքում այս ակունքների մոտ ամենահաճախակի այցելողները զինվորների հարազատներն էին:

Հայաստանի տարբեր բնակավայրերից եկած ուխտավորները, որպես իրականություն դարձած նպատակների առհավատչյա, բազմաթիվ խաչքարեր են տեղադրել ու տեղադրում «Լուսաղբյուրների» ակունքների մոտ:

Հարթաշենում պատմում են, որ ձմռանը՝ երեկոյան ժամերին, «Լուսաղբյուրների» ժայռաքարերի վերևում տեսել են այդ լույսը, մտածել են՝ մեքենայի լույս է, մոտ 2 կիլոմետր անցնելով՝ մոտեցել են «Լուսաղբյուրներին», սակայն ո՛չ մարդու, ո՛չ էլ մեքենայի հետքեր չեն նկատել սպիտակ ձյան ծածկոցի վրա[8] [21]:

«Լուսաղբյուրների»՝ նպատակներ իրականացնող զորության մասին պատմում են Աշոցքի տարածաշրջանի գրեթե բոլոր գյուղերի բնակիչները: Քարաժայռի ուղղահայաց պատերից մեկի վրա ակունքի ջրով թրջելով՝ մի փոքր քար են կպցնում՝ նպատակ պահելով, որ եթե քարը պատին է կպչում, ապա նպատակն անպայման կկատարվի:

[8] Լուսաղբյուրները տեսանելի են նաև Մուսայելյան գյուղից: Մուսայելյանում նույնպես պատմություններ կան, թե ինչպես են լույսը տեսել այդ աղբյուրների վրա:

Սերնդեսերունդ փոխանցվում է այդ հավատալիքը: Աղբյուրների ջրին վերագրում են նաև որդի պարգևող զորություն [20]:

Ականատեսները վկայում են, որ «Լուսաղբյուրների» ջրով բուժվել են հոդացավեր, ստամոքսի հիվանդություններ, մաշկային տարբեր հիվանդություններ, նույնիսկ անբուժելի հիվանդներն են այստեղ բուժվել:

Հարթաշենում պատմում են, որ երկար տարիներ տարագիր ունեցող ընտանիքներն աղբյուրին խնդրել են, և իրենց տարագիր որդիները օտարությունից վերադարձել են:

Աղբյուրի «պատժող զորության» մասին զրույցներ կան նաև Աշոցքի Հարթաշեն և Մուսայելյան գյուղերում [22]:

Կրասարի թթու ջրերը: Շիրակի մարզի հյուսիսարևմտյան մասում՝ Ախուրյանի վտակներից մեկի՝ Արփաչայի հովտում է Կրասարը: Այն հայտնի է իր գազավորված ջրերի ակունքներով:

Գյուղից 2 կմ հարավ-արևմուտք՝ Ախուրյան գետի վտակներից մեկի վրա, կառուցված է Կրասարի եռաթռիչք կամուրջը, որը Կրասարը կապում է հարևան Մեծ Սեպասար գյուղի հետ: Կամուրջով անցնող Ախուրյանի վտակի երկարությամբ կարելի է հանդիպել բուժիչ, թթու ջրերի ակունքների, որոնցից մեկն էլ «Ջերմուկ» անունը կրող հանքային տաք աղբյուրն է՝ Մեծ Սեպասար ու Կրասար գյուղերի միջև: Հանքային նյութերի պատճառով այդ ակունքների շուրջը պատված է կարմրավուն գույնով, ինչն առավել տեսանելի է դարձնում ակունքը:

Կրասարցիները պատմում են, որ այդ «թթու ջրերն» օգտագործում են ստամոքսի հիվանդություններ բուժելու, հոդացավերը թեթևացնելու նպատակով: Հոդացավեր, ձեռքերի ու ոտքերի ցավեր ունեցողները նաև աղբյուրների շրջակայքի ցեխով վաննաներ են ընդունում: Պատմում են նաև, որ հարևան Վրաստանից են եկել, մեծ տարաներով այդ հանքային ջրերը տարել հիվանդների համար: Որպեսզի հանքային ջուրը ճանապարհին իր հատկությունները չկորցներ, ջրի մեջ ասեղներ են գցել:

Աշոցքի տարածաշրջանի որոշ ակունքների սթափեցնող հատկություններ են վերագրում: Պատմում են, որ ինչքան էլ գինովցած լինեն, բավական է այդ աղբյուրների ջրից խմեն, անմիջապես կսթափվեն: Այդ աղբյուրներից մեկը «Հոլիկի աղբյուրն» է [23]:

Ամասիայի վարչական տարածքում է գտնվում «Արփի լիճ» ազգային պարկը, որի տարածքը հարուստ է ջրային պաշարներով: Այդ ակունքներից շատերի շուրջ նույնպես ավանդազրույցներ են հյուսվել:

Տարածքի աղբյուրներից շատերն անվանանում են թթու ջրեր և օգտագործում ստամոքսի ցավերի և հոդացավերի թեթևացման համար [24]:

Բանդիվանի «Զորավոր աղբյուրը»: Բանդիվանում հայտնի է «Զորավոր աղբյուրը», ինչը տեղացիները համարում են սրբատեղի ու ակունքի մոտ մոմեր վառում: Այդ աղբյուրը նաև հայտնի է իր պահապան օձով, որը մարդկանցից չի խուսափում ու մարդկանց չի վնասում: Բանդիվանի ավագ ու միջին սերնդի բնակիչները պատմում են, որ այդ օձն ավանդաբար ակունքի մոտ է (մի քանի սերունդ շարունակ): Այդ աղբյուրը անվանում են նաև «օձով աղբյուր»: «Զորավոր աղբյուրը՝ որպես սրբատեղի, երազներում են տեսնում և ուխտի գալիս:

Գյուղում պատմում են, որ ակունքից բխող զուլալ ջուրն ունի նախազգուշացնող հատկություն: Իր ողջ պատմության ընթացքում «Զորավոր աղբյուրի» ջուրը կտրվել է 88-ի Սպիտակի երկրաշարժից, քառօրյա պատերազմից ու 44-օրյա պատերազմից մի քանի օր առաջ: Որոշ ժամանակ անց աղբյուրը կամաց-կամաց սկսել է նորից հոսել [25]:

Ջրաձորի «Լուսաղբյուրը»: Ամասիայի տարածաշրջանում առանձնակի վերաբերմունք կա Ջրաձորի «Լուսաղբյուրի» հանդեպ: Գյուղի դիմացի սարին Ս. Գևորգ մատուռն է, որի լանջերին աղբյուրներ շատ կան, սակայն ժողովուրդը «հրաշագործ» հատկանիշներ վերագրել է դրանցից մեկին՝ անվանելով «Լուսաղբյուր» կամ «Սրբի աղբյուր»: Ջրաձորցիներն այդ ջրից խմում ու իրենց տուն են բերում ոչ միայն բժշկվելու համար, նաև հավատում են, որ այդ ջրի հետ իրենց տուն կմտնի հաջողությունն ու առատությունը [26]:

Սառնաղբյուրի «Զաղան»: Սառնաղբյուրի «Զաղան» Շիրակի մարզի թերևս ամենահայտնի ուխտավայրերից է: Բազմաթիվ վկայություններ կան «Զաղայի» քարանձավային սառնորակ ակունքի ջրով ստամոքսի հիվանդությունների, վերքերի և մաշկային հիվանդությունների բուժման մասին: «Զաղայի» ջրին մոգական հատկանիշներ են վերագրում ու հավատում, որ այդ ջրի օգնությամբ պտղավորվում են՝ անվանելով «տղաբերքի» ջուր: Հայաստանի տարբեր մարզերից այստեղ են գալիս՝ տոնելու Վարդավառը [13], [14]:

Սարալանջի «Թթու ջուրը»: Արագածի փեշերին գտնվող Սարալանջում հայտնի աղբյուր է «Թթու ջուրը», որը վերածել են ավազանի: Գյուղում պատմում են, որ ածխաթթու գազով հարուստ այդ ջուրը ոչ միայն հիվանդություններ է բուժում (հիմնականում՝ հոդացավեր), այլև այդ ավազանում լողանալուց հետո անպտուղ կանայք պտղավորվում են: Գյուղում օրինակներ են բերում՝ անվանական

թվարկելով «Թթու ջրի» զորությամբ լույս աշխարհ եկած երեխաներին։ Նման օրինակներ կան նաև Արթիկ քաղաքում [27]։ Սարալանջցիները և հարակից գյուղերի բնակիչները այդ ջրերով հոդացավերն են բուժում։ Ակունքների մոտի ցեխով պատում են մարմնի ցավող մասերը և մոտ կես ժամ պառկում արևին, այնուհետև լողանում հարակից Մանթաշ գետում։ Այդ ջրերն օգնում են նաև արագ վերականգնելու ուժերը, թոթափում են հոգնածությունը։

Շիրակում տարածված են ջրի մասին հետևյալ ասույթները.

- Երկու ջուրը մեկ հաց է։
- Որ աղբյուրից ջուր խմես, քար չգցես։
- Ջրի պես երկար կյանք ունենաս։
- Ջուրն ընկնողն անձրևից չի վախենա։
- Մինչև բարակ առուն ջուր գա, գորտի աչքը դուրս կգա։
- Ջրի բերածը ջուրը կտանի։
- Մաքուր ջուրը մաքուր ակունքից կբխի։
- Ջուրը չտեսած՝ մի բոբիկացիր։
- Ջուրն իր ճամփեն կգտնի։
- Ջուրն ամեն օր գերան չի բերի (նաև՝ գետն ամեն օր գերան չի բերի)։
- Լավություն արա, ջուրը գցիր, կգա քեզ կգտնի։
- Բերանը ջուր առնել (կիրառվում է երկու իմաստով, մեկը՝ ծարավը հագեցնելու, մյուսը՝ պապանձվելու)։

Եզրահանգում: Ներկայիս տեխնոաշխարհի առաջնահերթություն-ների կողքին կարծես երկրորդական պլան է մղվում հավատալիքների ու ավանդույթների պահպանումը։ Դիտարկված գյուղերից մեծամաս-նությունում, որտեղ ավելի քան 200 տարի առաջ բնակիչների պապերն հաստատվել են՝ գաղթելով Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից, ջրի պաշտամունքի ու կենցաղավարման ծեսերի հետ կապված ավանդույթներն առավել լավ են պահպանվել։ Պատկերն այլ է Ամասիայի որոշ գյուղական բնակավայրերում, որոնք վերաբնակեցվել են մոտ 3 տասնամյակ առաջ։ Այդ գյուղերի բնակիչների նախնիները, գաղթելով Արևմտյան Հայաստանից, վերջին 100 տարում 2, 3 երբեմն էլ 4 անգամ վերաբնակվելով տարբեր բնակավայրերում, հիմնականում մոռացության են մատնել ջրի ու աղբյուրների հետ կապված հավատալիքներն ու կենցաղավարման ավանդույթները։ Այն հիմք է տալիս եզարակացնելու, որ ժամանակային առավել փոքր միջակայքում վերաբնակեցման գործոնը նույնպես նպաստում է կենցաղավարման ծեսերի, ավանդույթների ուժի թուլացմանը։

ЧИСТЫЕ ВОДЫ И ГАЗИРОВАННЫЕ ИСТОЧНИКИ ШИРАКА: ЭТНОГРАФИЧЕСКИЕ ПОЛЕВЫЕ ИССЛЕДОВАНИЯ

Мартикян А. В.

Работа включает полевые исследования по выявлению наиболее известных источников – родников, проведенные в укрупненных общинах Ашоцк, Амасиа, Ани. Мы собрали и представляем вашему вниманию свидетельства и верования о “чудодейственных” источниках – родниках, сохранившиеся у местных и передаваемые из поколения в поколение. Большая часть исследованных источников – родников являются местами паломничества.

Ключевые слова: родник, вода, Ширак, Ашоцк, Амасиа, Лусахбюр, Жами ахбюр, Тту джур.

NATURAL SOURCES OF WATER IN SHIRAK REGION: ETHNOGRAPHIC FIELD STUDIES

Martikyan A. V.

The work includes field studies of the most well-known sources in the areas of Ashotsk, Amasia and Ani enlarged communities of Shirak region. We have collected and presented to your attention testimonies and beliefs about "miraculous" waters, which the locals have preserved from generation to generation. Most of the studied places are pilgrimages.

Keywords: source, water, Shirak, Ashotsk, Amasia, Ani, Lusaghbyur, Zhami Jur, Ttu Jur.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ղ. Ալիշան Հին հաւատք կամ կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ: u Ղազար: 1910: 566 էջ:
2. Աղայան Է. Բ., Առաքելյան Բ. Ն., Գալոյան Գ. Ա. և այլն: Հայ ժողովրդի պատմություն: Հ. 1: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1971: 991 էջ:
3. Ժամկոչյան Հ. Գ., Աբրահամյան Ա. Գ., Մելիք-Բախշյան Ս. Տ., Պողոսյան Ս. Պ. : Հայ ժողովրդի պատմություն, սկզբից մինչև 18-րդ դարի վերջը: Երևան, ԵՊՀ հրատ.: 1975: 783 էջ:

4. Լալայան Ե. Գանձակ: Երկեր 5 հատորով: հ. 2: Երևան, ՀՍՍՌ հրատ.: 1988: 507 էջ:
5. Սահակյան Ա. Շ. «Սասնա ծռերի» պատումների քննական համեմատություն: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1975: 190 էջ:
6. Պետրոսյան Ա., Բոբոխյան Ա. Վիշապ քարակոթողները: Երևան, «Գիտություն» հրատ.: 2015: 420 էջ:
7. Բդոյան հ. Վ. Հայ ազգագրություն: Երևան, ԵՊՀ հրատ.: 1974, 287 էջ:
8. Խառատյան-Առաքելյան հ. Հայ ժողովրդական տոները: Երևան, «Զանգակ-97» հրատ.: 2005: 360 էջ:
9. Լալայան Ե. Ջրի պաշտամունք:// Ազգագրական հանդես: 1903: X գիրք: էջ 182-183:
10. Վարդումյան Գ. Ջրի պաշտամունքը հայոց մեջ: Ծովի մշակույթը մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսություն: Երևան, «Մուղնի» հրատ.: 2011: 346 էջ:
11. Ավագյան Վ. Վ. Ջրի պաշտամունքը հայոց հավատալիքներում և կենցաղավարման ծէսերում// Հայկազեան հայագիտական հանդէս, հատոր 37: 2017: էջ 43-56:
12. Աբրահամյան հ. Շիրակի վարդավառյան ուխտավայրերը (համառոտ նկարագիր)// ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական աշխատություններ: 2012: XV: էջ 159-168:
13. Աբրահամյան հ. Վարդավառը Շիրակում:// Հայ Աստվածաբանական գիական հոդվածների ժողովածու Ե: 2013: էջ 209-242:
14. Մալխասեանց Ս. Հայերէն բացատրական բառարան: Երևան: ՀՍՍՌ հրատ: 1944: 2409 էջ:
15. https://www.youtube.com/watch?v=WjN6uFnC9vE (07.09.2022)
16. https://www.youtube.com/watch?v=rXX4KTWfSLU (07.09.2022)
17. https://www.youtube.com/watch?v=L5VPtAcdc9k (07.09.2022)
18. https://www.youtube.com/watch?v=V5LhlA_1kgI (07.09.2022)
19. https://www.youtube.com/watch?v=S3kq3B-31qg (07.09.2022)
20. https://www.youtube.com/watch?v=-GnPgCM4TP0&t=3s (07.09.2022)
21. https://www.youtube.com/watch?v=_EoU5oElRms (07.09.2022)
22. https://www.youtube.com/watch?v=RXwTj9nD8bg (07.09.2022)
23. https://www.youtube.com/watch?v=TGHD5Cp5aUY (07.09.2022)
24. https://www.youtube.com/watch?v=p7RycCISj6Y (07.09.2022)
25. https://www.youtube.com/watch?v=hePu2khjfB4 (07.09.2022)
26. https://www.youtube.com/watch?v=4HPfbfcOcks (07.09.2022)

27. https://www.youtube.com/watch?v=QK1eP0pczEU (07.09.2022)

Տեղեկություններ հեղինակի մասին
Մարտիկյան Ա. Վ.
Շիրակի պետական համալսարան
Էլ. փոստ՝ annamartikyan7@gmail.com

Ստացվել է խմբագրություն՝ 06.09.2022
Գրախոսվել է՝ 12.12.2022